Մրցույթի հայտարարություն

Երևանի Կոստան Զարյանի անվան հ. 117 հիմնական դպրոց ՊՈԱԿ
տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 04-ի N 319 –Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության / նշանակման/ կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ Երևանի Կոստան Զարյանի անվան հ. 117 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են.
   1) ՀՀ քաղաքացիությունը.
   2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը / հավաստագիր/:
2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
   1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով
   2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն.
   3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճեն.
   4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
   5) Ինքնակենսագրություն:

   Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ :

   Փաստաթղթերը ընդունվում են Կ.Զարյանի անվան հ.117 հիմնական դպրոցում 2023 թվականի հունվարի 09-ից մինչև հունվարի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 15:00, բացի հանգստյան /շաբաթ, կիրակի/ և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

   Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի փետրվարի 10-ին ժամը 15:00-ին Կոստան Զարյանի անվան հ.117 հիմնական դպրոցում, հասցե՝ Երևան ,Ֆանարջյան փողոց, 15 :

   Տեղեկությունների համար դիմել ՝ հեռախոս՝ 010 28-76-97, +37491 53-97-77, էլ.հասցե՝ 117_schoolv@mail.ru